

տպածոյի զարդափորագրիչներ ըլլալուն<sup>1</sup>, որոնք փոխանակ ամիջապէս Հայ ձեռագրագրողներուն իրենց խորթ ձեւերուն ենթարկուելու (որ աւելի հաւատարմութեամբ կատարուեցաւ Եւրոպացի փորագրիչներէ Հայ տպագրութեան սկզբնաշրջանին) ի



թ. 26. Տօնացոյց 1774թ. էջ 154.

նպաստ գործածեցին նաեւ տպածոյի զարդարուեստի ձեւաւորումներու իրենց գիտութիւնն և փորձառութիւնը և այդ պատճառաւ իսկ մանաւանդ ԺՂ դարուն առաջ եկաւ Հայ տպագրութեան զարդաձեւերուն մէջ Հայ հին հարազատ ձեռագրական զարդաձեւերուն և տպածոյի զարդաձեւերուն ձուլեալ խառնուրդը:

Յարութիւն Էջմիածնեցիի պատկերնե-

րը, գոնէ այս վերոյիշեալ հրատարակութեան մէջ՝ դարձեալ հարազատ Հայ յղացումներ չեն: Իսկ արհեստը փայտափորագրական չէ այլ մետաղի վրայ փորագրութիւն է<sup>2</sup>: Օրինակ, անոր 154 էջի պատկերը Համբարձման (թ. 26) ընդօրինակութիւնն է Ոսկանի Աստուածաշունչի 569 էջին (թ. 17)<sup>3</sup>: Յարութիւն Էջմիածնեցի սակէ կամ 1729ի Կ. Պոլսոյ Աւետարանին 358 էջի պատկերէն (թ. 18)<sup>4</sup> զարդափարած է իր մետաղափորագրեալ Համբարձումը:

Իրմէ նմոյշ մը եւս և բաւական կը սեպեմ: 76 էջի պատկերը (թ. 27) զարդափարեալ է 1710ին Կ. Պոլիս հրատարակուած Ժողովածուի 182 էջին նոյն պատկերէն (աստ թիւ 28) որ իր կարգին Ոսկանէն աւելուած է:

Էջմիածնեցի փորագրիչ Յարութիւն մէկ բան մը կրցած է ընել, այդ է իւր օրինակներու տիպերն ու դէմքերը հայացնել կամ արեւելականացնել:

Իսկ այս փորձն աւարտելէս առաջ հոս կը ներկայացնեմ երկու նմոյշները անծանօթ Հայ փայտափորագրիչի մը՝ որ թէեւ զուրկ արհեստին պահանջած նորութիւններէն, սակայն քաջութիւնն ունեցած է ինքնուրոյն կերպով արտայայտուելու, հետեւելով հայունակ արուեստին այդ շքրջանին զարգացման աստիճանին (կրնանք և անկման նկատել):

Այս երկու պատկերներուն տպագրուած հատորը լոյս տեսած է հանգոյցեայ Մանուէի Մարտիրոսի տպարանէն ի Կ. Պոլիս: Պատկերները կը գտնուին էջ 2 և 296 (թ. 29 և 30). հատորի տիտղոսն է Տարարան վայելուչ, սակայն դժբախտա-

1. Այս մասին 1650էն առաջ կը բերեմ վկայութիւնը նշանաւոր թուրք ուղեգիր Էվլիայ էֆենտիի որ այդ ժամանակուան Կ. Պոլսոյ մասին խօսելով կ'ըսէ տպածոյի (չիթ պատմածիներու) արհեստաւորներու համագործակցութեան համար. «Անոնք հարիւր մարդ են 25 աշխատանոցներով: Անոնց պաշտպանը Ապղասի որդի Ֆազլն է: Անոնք մեծ մասամբ Հայեր են թոքատէն և Սվազէն, Պարսիկ ու Հնդկ տպոյնիք, որոնք զամանալիօրէն նուրբ ծածկոցներ և վարագոյրներ կը ազնե-

իքրի վրայ» (The Travels of Evliya Efendi; London, 1850, vol. II, էջ 220): Յիշուած իբր բամբակեայ յամախ իւէժապատ հիւսուածեղէնն է:

Էվլիայի այս վկայութիւնը աւելի քան կարեւոր է փաստելու համար վերի իմ հետաւութիւնս:

2. Հաւանաբար պղինձի վրայ ժանտաշուրով (Etching):

3. Աստ, էջ 11:

4. Աստ, էջ 11: